ամփոփագիր 128

Ծառայությունների մատուցման պայմանագիր

«11» հոկտեմբեր 2011թ.

ք. Երևան

ՀՀ Արդարադատության Նախարարության ԴԱՀԿ ծառայությունը «այսուհետ՝ Պատվիրատու», ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարող Մ. Պողոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և Հայկ Սլավիկի Վաթյանը, անձնագիր AK 0600456, արված 20.08.2010թ. 004ի կողմից, սոց. քարտ 1904790011, բնակվող ք. Երևան, Բակունցի 2-8, «այսուհետ Կատարող», երկուսը միասին «այսուհետ՝ Կողմեր», հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությունը, կնքեցին սույն պայմանագիրը «այսուհետ՝ Պայմանագիր» հետևյալի մասին.

1 Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը հանձն է առնում Պատվիրատուին պատկանող ծառայությունում ներդնել գրասենյակի վարման, արխիվի վարման, վարույթների վարման, վարույթների հաշվառման և հաշվետվությունների ստացման, դրամարկղի վարման և դեպոզիտ հաշիվների վարման առցանց համակարգչային /էլեկտրոնային/ համակարգերի «այսուհետ Համակարգ», և իրականացնել դրա տեխնոլոգիական սպասարկման աշխատանքները «այսուհետ Սպասարկում»:

1.2 Սպասարկման աշխատանքները իրենց մեջ ներառում են

- Համակարգի անխափան աշխատանքի ապահովումը;
- Ծրագրային միջոցների նորացումը;
- Մոդուլների անվտանգության ապահովումը;
- Հիմնական սերվերների, ինչպես նաև ռեզերվային սերվերների միջև աշխատանքների ապահովումը:

1.3 Սպասարկումը իր մեջ չի ներառում Համակարգին պատկանող սերվերների տեխնիկական սպասարկման, ախտորոշման և մաքրման, ինչպես նաև բոլոր այն աշխատանքները, որոնք կպահանջեն Համակարգի կառուցվածքային փոփոխություններ կամ նոր ֆունկցիոնալության ապահովում:

2 Վճարման կարգը և ժամկետները

2.1 Համակարգի Սպասարկման համար Պատվիրատուն Կատարողին վճարում է ամսեկան 132.000 /մեկ հարյուր երեսուներկու հազար/ ՀՀ դրամ, /ներառյալ հարկերը և օրենքով սահմանված պարտադիր վճարները/:

2.2 Պատվիրատուն *2ձ* կետում նշված վճարումը կատարում է յուրաքանչյուր ամիս, տվյալ ամսվա համար վճարը կատարելով մինչև հաջորդ ամսվա 7-ը համաձայն Կատարողի կողմից ներկայացված ակտերի:

3 Կողմերի պարտավորությունները

3.1 Կատարողը պարտավոր է.

3.1.1 Պատշաճ կերպով իրականացնել Պայմանագրի 1.2 կետով սահմանված Սպասարկման աշխատանքները:

3.1.2 Երկու աշխատանքային օրվա ընթացքում արձագանքել և դիտարկել Պատվիրատուի կողմից ներկայացված կանչերին:

3.1.3 Վերացնել Պատվիրատուի կողմից Համակարգում հայտնաբերված թերությունները 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.4 Պարբերաբար իրականացնել Համակարգում շահագործվող ծրագրերի նորացում:
3.1.5 Պահպանել, չհրապարակել և երրորդ անձանց չտրամադրել Պատվիրատուի առևտրային կամ Բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, որոնք Կատարողին հայտնի են դարձել Պայմանագրի շրջանակներում, Սպասարկման աշխատանքների կատարման արդյունքում:

3.2 Պատվիրատուն պարտավոր է.

3.2.1 Տեղեկացնել Կատարողին Համակարգի սերվերի վրա կատարվող փոփոխությունների մասին:
3.2.2 Տեղյակ պահել Կատարողին Համակարգի սերվերի և ծրագրային ապահովման տեղափոխման մասին:
3.2.3 Սպասարկման աշխատանքների կատարման համար վճարել Կատարողին Պայմանագրի 2.1 և 2.2 կետերով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

4 Կողմերի պատասխանատվությունը

4.1 Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում Կողմերը ենթակա են պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:
4.2 Պայմանագրի 2.2 կետով սահմանված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուն պարտավորվում է վճարել տույժ, յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Պայմանագրի 2.1 կետով սահմանված ամսավճարի 0.3 տոկոսի չափով:
4.3 Պայմանագրի 3.1.3 և 3.1.4 կետերով սահմանված ժամկետների խախտման դեպքում Կատարողը պարտավորվում է վճարել տույժ, յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Պայմանագրի 2.1 կետով սահմանված ամսավճարի 3 տոկոսի չափով:
4.4 Կողմերը ենթակա չեն պատասխանատվության Պայմանագրի համապատասխան կետերով սահմանված ժամկետները խախտելու համար, եթե դրանց պատճառ են հանդիսացել մյուս կողմի գործողությունները կամ անգործությունը:
4.5 Տույժերի վճարումն Կողմերին չեն ազատում Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց:
4.6 Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերն ենթակա չեն պատասխանատվության, եթե դրա պատճառ է հանդիսացել անհաղթահարելի ուժի ազդեցությունը, որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել:

5 Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից կնքման պահից և գործում է անժամկետ:
5.2 Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր հայտնելով մյուս կողմին: Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում 3 բանկային օրվա ընթացքում Կողմերը իրականացնում են փոխհաշվարկ:

6 Լրացուցիչ պայմանները

6.1 Կողմերը երկկողմանի գրավոր համաձայնությամբ իրավունք ունեն փոփոխել Պայմանագրով սահմանված վարձատրությունը, վճարման կարգը, Սպասարկման աշխատանքների կատարման ժամկետները և այլն:
6.2 Բոլոր փոփոխությունները և ավելացումները Պայմանագրում կատարվում են գրավոր և Կողմերի համար պարտադիր են դառնում կնքման պահից սկսած:

6.3 Կողմերը միմյանց ներկայացնում են պատասխանատու աշխատակիցների մասին տվյալներ: Կողմերի տվյալ աշխատակիցները գործում են նրանց անունից և համարվում են լիազոր ներկայացուցիչներ:
6.4 Կողմերը տրամադրում են միմյանց գործառնական հեռախոսահամարներ և էլեկտրոնային փոստի հասցեներ, Պայմանագրով նախատեսված Սպասարկման աշխատանքները կազմակերպելու համար:
6.5 Վթարի կամ սխալի դեպքում Պատվիրատուի ներկայացուցիչը բանավոր Կատարողին ներկայացնում է կանչ, որով նշվում է վթարի կամ սխալի նկարագրությունը:

7 Այլ պայմաններ

7.1 Կողմերի միջև Պայմանագրի պայմանների կատարման ընթացքում ծագած վեճերը առաջնահերթության կարգով լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:
7.2 Բոլոր այն պայմանների դեպքում, որոնք նշված չեն Պայմանագրում, Կողմերը ղեկավարվում են ՀՀ քաղաքացիական օրենդրության համապատասխան դրույթներով:
7.3 Եթե Պայմանագրի կետերից որևէ մեկը ինչ-որ պատճառով ճանաչվում է ուժը կորցրած կամ անլուծելի, դա չի ազդում մյուս կետերի վրա և դրանք չեն կորցնում իրենց իրավաբանական ուժը:
7.4 Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Դրանցից մեկը տրվում է Կատարողին, իսկ մյուսը՝ Պատվիրատուին:

8 Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ Արդարադատության Նախարարության	Հայկ Սլավիկի Վաթյան
ԴԱՀԿ ծառայություն	
ք. Երևան Հալաբյան 41ա	անձն. AK 0600456
թիվ մեկ գանձապետական բաժանմունք	ք.Երևան, Բակունցի 2-8
ՀՀ 900013288023	
ՀԿՀՀ 01223338	
ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող՝	
Մ. Պողոսյան _____	_____